



Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01/07/2019 - 30/09/2019թթ. (ներառյալ՝ 01/09/2019 - 30/09/2019թթ.) տվյալների ամփոփում

Հաշտարարի գրասենյակը 01/07/2019 - 30/09/2019թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 3,236 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 3,050-ն են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 3,050 բողոքներից 399-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասն իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ, և ըստ էության, չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը: 01/07/2019 - 30/09/2019թթ. Հաշտարարի քննությանը ենթակա 2,651 բողոքներից 1,440-ն ընդունվել են քննության:

Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝	3,236
Վերաբերում են ֆինանսական համակարգին՝	3,050
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	399
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	2,651
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	1,440
2.1. 1. Բանկերի դեմ, կապված են՝	570
• Վարկային գործարքների հետ	489
• Ավանդային գործարքների հետ	58
• Վճարահաշվարկային գործարքների հետ	22
• Այլ	1

2.1. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝	750
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	16
• Առողջության ապահովագրության հետ	21
• Աջակցության ապահովագրության հետ	7
• Դժբախտ պատահարի ապահովագրության հետ	2
• Գույքի ապահովագրության հետ	3
• Կամավոր պատասխանատվության ապահովագրության հետ	2
• ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ՝ Բյուրո)	699
2.1. 3. Վարկային կազմակերպությունների դեմ	116
2.1.4. Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների դեմ	4

Գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքների ելքեր (հատ դեպք)՝ [1]	1,358
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	574
Պահանջը մասնակի է բավարարվել	170
Պահանջը բավարարվել է	97
Պահանջը մերժվել է	416
Պահանջի քննությունը դադարեցվել է	95
Պահանջի քննությունը մերժվել է	6

Հաշտարարի գրասենյակը 01/09/2019 - 30/09/2019թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 966 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 917-ն են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 917 բողոքներից 96-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասն իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ, և ըստ էության, չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության,

քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի, շահերի ոտնահարման փաստը: 01/09/2019 - 30/09/2019թթ. Հաշտարարի քննությանը ենթակա 821 բողոքներից 525-ն ընդունվել են քննության:

Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝	966
Վերաբերում են ֆինանսական համակարգին՝	917
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	96
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	821
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	525
2.1. 1. <u>Բանկերի դեմ</u> , կապված են՝	240
• Վարկային գործարքների հետ	191
• Ավանդային գործարքների հետ	42
• Վճարահաշվարկային գործարքների հետ	7
2.1. 2. <u>Ապահովագրական ընկերությունների դեմ</u> , կապված են՝	252
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	5
• Առողջության ապահովագրության հետ	11
• Աջակցության ապահովագրության հետ	1
• Դժբախտ պատահարի ապահովագրության հետ	1
• Կամավոր պատասխանատվության ապահովագրության հետ	1
• ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ՝ Բյուրո)	233
2.1. 3. Վարկային կազմակերպությունների դեմ	33

Գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքների էլքեր (հատ դեպք)՝ [1]	454
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	210
Պահանջը մասնակի է բավարարվել	47
Պահանջը բավարարվել է	38
Պահանջը մերժվել է	129
Պահանջի քննությունը դադարեցվել է	30
Պահանջի քննությունը մերժվել է	0